ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N451-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Երևանի Սևանի փողոցի հ.104/2 հասցեում գտնվող շենք- շինությունները և դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 1797.7 քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.04.2016թ. հ.13042016-01-0009 վկայական) անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահը դիմել է Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Երևանի Սևանի փողոց հ.104/2 հասցեում գտնվող շինությունները և դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը անհատույց օգտագործման իրավունքով կոմիտեին տրամադրելու խնդրանքով:

Քննարկվող հասցեում գտնվող հողամասը ՀՀ կառավարության 24.12.2009թ հ.1517-Ն որոշմամբ փոխանցվել է Երևան համայնքին: Երևանը, որպես համայնք ձևավորվելուց հետո, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի արդյունավետ կառավարման նպատակով նախաձեռնել է պետական գրանցման աշխատանքներ Սևանի փողոց հ.104/2 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ, որի արդյունքում ստացվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.04.2016թ. հ.13042016-01-0009 վկայականը:

Վերոհիշյալ հասցեում գտնվող տարածքը մշտապես օգտագործվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից՝ որպես ավտոտնտեսություն: Պետական եկամուտների կոմիտեի բնականոն աշխատանքները շարունակելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել Սևանի փողոց հ.104/2 հասցեում գտնվող պահակատունը /37.8 քմ/, ավտոտնակները /285.2 քմ/, սանհանգույցը /1.3 քմ/, բոքսերը /108.5 քմ/, բենզալցման կետը /27.2 քմ/, պարիսպը /11.9 քմ/, ծածկերը /45.6 քմ+7.8 քմ/ և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 1797.7քմ մակերեսով հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել կոմիտեին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ